



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸԼԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)
N10(9) 2009թ. հուլիսի 21- օգոստոսի 20

5 հոկտեմբերի, 2009թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ</i>	3
1.1 Օրենքներ	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ.....	3
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ	3
<i>2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ</i>	5
<i>3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ</i>	5
3.1 Կառուցվածք և գործառույթներ.....	5
3.2 Ծրագրեր և կատարողականություն	5
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների	6
3.4 Միջազգային համագործակցություն	7
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում	7
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն.....	7
3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր.....	8

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	10 հուլիսի 2009 թ., ՀՕ-165-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 39 (705), 01.08.2009թ.
Ուժի մեջ է	15 օգոստոսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ից ազատված հարկվող գործարքների և գործառնությունների 2-րդ և 4-րդ կետերում կատարվել են փոփոխություններ, որոնք պայմանավորված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1038-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	2009 թվականի հուլիսի 9, N 766-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 37 (703), 22.07.2009թ.
Ուժի մեջ է.	01 օգոստոսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

«Ֆիզիկական անձի տարեկան գույքի և եկամուտների հայտարարագրի» ձևը լրացվել է «Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկ» հավելված N4-ով, որը ներկայացնում են ամբողջ հաշվետու տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված հարկ վճարողները՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 հուլիսի, 2009թ., N 857-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 40 (706), 12.08.2009թ.
Ուժի մեջ է	13 օգոստոսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման թույլտվության և ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը և ձևերը սահմանելու մասին» N 1093-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված կարգում կատարվել է լրացում նոր՝ 15.1-ին կետով՝ համաձայն որի արտահանվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է միայն բուսասանիտարական զննման միջոցով և անվճար:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների՝ որոշակի խմբաքանակների կտրոնների դարձերեսներին ֆիրմային անվանումներ, ապրանքային և սպասարկման նշաններ տեղադրելու իրավունքի հատկացման աճուրդների անցկացման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
------------	---

Ամսաթիվը և համարը	28 հուլիսի, 2009թ., 2075-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 24 (342), 15.08.2009թ.
Ուժի մեջ է	25 օգոստոսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Նշված հրամանով հաստատվել է կտրոնների դարձերեսներին ֆիրմային անվանումներ, ապրանքային և սպասարկման նշաններ տեղադրելու իրավունքի հատկացման աճուրդների անցկացման կանոնակարգը, որին շահագրգիռ անձինք կարող են ծանոթանալ հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.taxservice.am: Կանոնակարգով սահմանվել են, մասնավորապես. աճուրդի մասին հրապարակային ծանուցումը, աճուրդին մասնակցելու պայմանները, աճուրդի կազմակերպումն ու անցկացումը, լուծի գնի վճարումը:

Փաստաթուղթ	«Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	22 հուլիսի, 2009թ., 1964-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 24 (342), 15.08.2009թ.
Ուժի մեջ է	25 օգոստոսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Հարկային և պարտադիր այլ վճարների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը և դրանք հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 471 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝ սահմանվել է հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի: Համաձայն նշված հավելվածի պայմանագիրը կնքվում է հարկ վճարողի և ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի միջև, ի դեմս աշխատակազմի ղեկավարի: Սահմանվել են նաև հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգն ու պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, կողմերի պատասխանատվությունը, անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր), հարկ վճարողների կողմից ներկայացման ենթակա հաշվետվությունների տեսակների ցանկը և այլ պայմաններ:

Փաստաթուղթ	«Հյուրանոցային տնտեսության օբյեկտների նկատմամբ չափանիշներ սահմանելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	7 հուլիսի, 2009թ., 530-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 23 (341), 03.08.2009թ.
Ուժի մեջ է	13 օգոստոսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Ի կատարումն «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության և 36.6 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ սահմանվել է, որ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության և 4.2 գլխի իմաստով զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության

լիազորած մարմնի սահմանած չափանիշներին համապատասխանող են համարվում.

1) «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտները, բացառությամբ այն հյուրանոցատիպ հանգրվանների, որտեղ մատուցվող տեղաբաշխման ծառայությունները չեն ներառում առնվազն մեկ գիշերակաց և չի վարվում հաճախորդի կամ հաճախորդի համար ամրագրում կատարող անձի վերաբերյալ տվյալների պատշաճ տեղեկատվության (ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային, իրավաբանական անձանց համար պետական գրանցման տվյալներ, ինչպես նաև հյուրանոցային համարի ամրագրման և զբաղեցման ժամկետների վերաբերյալ) ստացման և պահպանման գործավարություն.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմանը համապատասխան որակավորման կարգ ունեցող հյուրանոցային տնտեսության օբյեկտները:

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

Փաստաթուղթ	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին
Ամսաթիվը և համարը	10 հուլիսի, 2009թ., ՀՕ-163-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 39 (705), 01.08.2009թ.
Ուժի մեջ է	5 փետրվարի, 2010թ.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված՝ կրթության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներում կատարվել են փոփոխություններ, որոնք պայմանավորված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ:

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին
Ամսաթիվը և համարը	10 հուլիսի, 2009թ., ՀՕ-164-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 39 (705), 01.08.2009թ.
Ուժի մեջ է	5 փետրվարի, 2010թ.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված՝ կրթության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներում կատարվել են փոփոխություններ, որոնք պայմանավորված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ:

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

3.1 Կառուցվածք և գործառույթներ

3.2 Ծրագրեր և կատարողականություն

3.2.1 Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Մշակվել և Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի (ԵՎԲԱԽ) քննարկմանն է ներկայացվել «Հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների հիման վրա բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծով սահմանված է ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի հիմնական սկզբունքները, ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկը, ընտրանքի քայլերը, ռիսկայնության սանդղակավորումը:

ԵՎԲԱԽ-ի քննարկումների արդյունքում ստացված առաջարկությունների հիման վրա նախագիծը լրամշակվել է և ներկայացվել կարծիքի:

- Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների գործարկման շրջանակներում մշակվել է «Ծրագիր ՀՀ հարկային համակարգում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների գործարկման վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանի նախագիծը: Նախագծով սահմանվում են սպասարկման կենտրոնների ստեղծման հիմնական նպատակները, ինչպես նաև վերջիններիս գործարկման ուղղությամբ առաջացող խնդիրները, սպասարկման կենտրոնների գործարկման փուլերը, ակնկալվող արդյունքը և այլ հարցեր:

- Հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային տարբերակով ներկայացման

օրենսդրական առաջարկությունների հետ մեկտեղ մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով սահմանվել է էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների պարտադիր ներկայացման ժամանակացույցը: Մասնավորապես, սկսած 2009թ. հոկտեմբերի 1-ից հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու են հետևյալ սուբյեկտները.

- ✓ բանկերը, վարկային կազմակերպությունները, արժեթղթերի շուկայի մասնակիցները,
- ✓ «Հաշվապահական հաշվառման մասին» 26.12.02թ. ՀՀ օրենքի համաձայն՝ խոշոր կազմակերպությունները¹,
- ✓ պետական կառավարչական հիմնարկները, պետական ոչ առևտրային հիմնարկները (որոնց նախորդ տարվա շրջանառությունը գերազանցում է 100 մլն. դրամը),
- ✓ 50 % և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունները (որոնց նախորդ տարվա շրջանառությունը գերազանցում է 100 մլն. դրամը):

Նախագիծը ընդգրկված է ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման վեցերորդ նստաշրջանի օրակարգում և ներկայացվել է առաջին ընթերցման:

3.2.2 Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

Կարևորելով մաքսային հսկողության ոլորտում իրականացվող բարեփոխումները, մասնավորապես հետբացթողումային հսկողությունը՝ մշակվել է «Ապրանքների և տրանսպորտային միջոցների հետբացթողումային հսկողության իրականացման ուղեցույցի նախագիծ»: Այս ուղեցույցը նպատակ ունի ավելի լայն շրջանակներում հետբացթողումային հսկողության ընթացակարգերի վերաբերյալ համակարգված և հիմնավորված մոտեցում ցուցաբերել՝ բարձրացնելով ընթացակարգերի հրապարակայնության և մատչելիության աստիճանը: Ուղեցույցում ներառված են մի շարք կարևոր բաժիններ, մասնավորապես հետբացթողումային հսկողության հիմնական հասկացությունները և հսկողության իրականացման սկզբունքները, հետբացթողումային հսկողության հիմնական նպատակները և խնդիրները, հետբացթողումային հսկողության իրականացման նպատակով իրականացվող վերլուծական աշխատանքները և իրականացման մեթոդները, հետբացթողումային հսկողության իրականացման ժամանակ կողմերի իրավունքներն ու պարտականությունները, հիմնական օգտագործվող տեղեկություններն ու փաստաթղթերը և այլն: Ուղեցույցը մշակելիս ուսումնասիրվել է ոչ միայն մեր երկրում կիրառվող հետբացթողումային հսկողության իրականացման ընթացակարգերը, այլ հաշվի է առնվել նաև միջազգային փորձը:

Ներկայումս ուղեցույցը բերվում է վերջնական տեսքի՝ համաձայնեցնելով շահագրգիռ այլ ստորաբաժանումների հետ:

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

3.3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների/ հարկային ծառայության մասով/

21.07.2009թ.-ից մինչև 20.08.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է ընդամենը թվով 22 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 17 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.07.2009թ.-ից մինչև 20.08.2009թ.-ը քննարկվել է ընդամենը թվով 17 բողոք, որից.

- բավարարվել է 2 բողոք,
- բավարարվել է մասնակի 2 բողոք,
- կարճվել է 2 բողոք,
- մերժվել է 11 բողոք:

¹ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված է, որ խոշոր կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկին.

- նախորդ տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է 500 մլն. դրամը.
- նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 մլն. դրամը:

3.3.2 Ահնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների/ մաքսային ծառայության մասով/

21.07.2009թ.-ից մինչև 20.08.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել է թվով 7 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 11 մաքսային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

3.4 Միջազգային համագործակցություն

2008 թվականի հուլիսի 6-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2009թ. հուլիսի 15-ին և գործելու է 2010թ. հունվարի 1-ից:

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/

2009թ. օգոստոսի 6-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության 36 թափուր պաշտոնները համալրելու նպատակով: Մրցույթն անց է կացվելու 2009թ. սեպտեմբերի 8-ին: Հարկային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և տեղադրվել www.taxservice.am ինտերնետային կայքում:

2009թ. օգոստոսի 5-ին մաքսային ծառայության 15 թափուր պաշտոնների համար հայտարարվել է մրցույթ, որին մասնակցելու համար դիմել են 65 քաղաքացի:

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն

3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության «Թեժ գիծ»-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14-ից: 2009թ. օգոստոս ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԾ «Թեժ գծով» ստացվել է 175 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզևավճարների տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, ՏՀՏ-ներում գոյացած հերթերին, շահած կտրոններին և թվերին, ինչպես նաև վիճակահանությանը առնչվող բազմաթիվ այլ հարցերի: Առաջարկությունները հիմնականում վերաբերել են պարզևավճարների տրամադրման նոր կարգին և պայմաններին: Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ-ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 20-ը «Թեժ գծով» ստացվել է 350-400 զանգ: Չանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 5 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, արտահանման ընթացակարգերի, ինչպես նաև արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 20-ը ստացված բոլոր բողոքներին արձագանքվել է:

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009 թվական		
		հուլիս	հունվար- հուլիս	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հուլիս), %
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1,146.0	9,575.0	80.7
2	Հարկային մարմնի կողմից պետ. բյուջե հավաքագրված եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	36,034.1	218,719.0	89.8
2.1	ԱԱՀ	8,525.6	41,774.9	73.5
2.2	Շահութահարկ	6,402.4	51,279.3	96.0
2.3	Ակցիզային հարկ	470.4	3,262.8	44.4
2.4	Եկամտահարկ	5,640.2	32,434.3	112.0
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9,021.7	56,867.0	98.4
2.6	Այլ	5,973.8	33,100.7	84.6
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2,717.0	15,840.0	173.3
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1,527.1	17,577.8	70.2

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ, %	
		հունվար- հուլիս	հուլիս	հունվար- հուլիս	հուլիս	հունվար- հուլիս	հուլիս
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	150,183.0	29,203.0	116,563.0	19,001.0	77.6	65.1
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	927,986.0	173,310.0	742,146.0	136,953.0	80.0	79.0
2.1	արտահանում (մլն դրամ)	194,853.0	35,108.0	146,823.0	33,851.0	75.4	96.4
2.2	ներմուծում (մլն դրամ)	733,133.0	138,203.0	595,323.0	103,102.0	81.2	74.6
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	21,279.0	4,896.0	14,339.0	3,065.0	67.4	62.6